Մրցույթ՝ ՀՀ Երևան մարզի « Հանրապետական N2 հատուկ կրթահամալիր **» ՊՈԱԿ-ի նախնական մասնագիտական / արհեստագործական/ կրթական ծրագրով <<Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում>> մասնագիտությամբ՝ 15 ժամ տեսական ուսուցմամբ և 0**.9 դրույքով վարպետի **թափուր տեղի համար:**

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին: Մասնակիցը հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը, վիճակահանությամբ ընտրում է հարցատոմսը, որը բաղկացած է հինգ հարցից, որում կարող են ներառվել նաև 1-3 գործնական հարցեր և կարող է անձին տրվել մինչև հինգ հարակից հարց, որը նույնպես առնչվում է առաջադրանքին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- կրթություն մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
- անձնագիր (բնօրինակը կամ պատճենը)
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
- ինքնակենսագրություն (ձև 4)
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Հաստատության կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ-ի ապրիլի 18-ից մինչև ս/թ ապրիլի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. մայիսի 7-ին՝ ժամը 11:00-ին, Հանրապետական** N2 **հատուկ կրթահամալիրում** , հասցե Ք. Երևան Ռաֆֆու 113 : Տեղեկությունների համար զանգահարել 010742206 հեռախոսահամարով: